

72
 ՆԸՔ
 տ. ք

Լ Ա Պ Տ Ե Ր

Դ Ի Ո Ք Ի Ն Ե Ա Ն

ԲՆ

ԲՆ

ԲԱ

ԲԱՐ

ԲԱՆ

ԲԱՆ

ԲԱՆ

ԼԱՊՏԵՐԻ շրջանը 60 օրինակէ կը բաղկանայ:
 Շրջանին գինն է զահեկան . . . 40
 Կիսաշրջանին » . . . 25
 Գաւառաց համար » . . . 30

Իւրաքանչիւր օրինակի գինն է փարայ , 30
 Նամակ կամ ո՛ր է կրտսիւն պէտք է ուղղկ
 առ հնօրէն և Տէր Արամ Աշնեան Կ. Պօլիս
 Սրբապետին խան փարի յարկ թիւ 35

Ս. ՏԱՐԻ Ա. ԵՐԶԱՆ

1884 ՕԳՈՍՏՈՍ 18

ԹԻՒ 10

ՎԱՂԸ

Մարդուս կենաց մէջ օր մը միայն
 փայլ լիցուն յոյսերով, երազներով, անփր-
 հարելի պարտքերով և անգործադրելի
 խոստումներով:

Արդար և օր հիանալի, օր պարմանա-
 լի, յորում կատարելու մեծամեծ խոս-
 տումներ կրնեն մարդիկ և չեն յարգեր
 երբեք իրենց սյգ խոստումներ:

Այդ օրը ծոյլին ապաւենը, և աղքա-
 տին գրամագլուխն է:

Այդ օրը գրամի նման մարդոց մէջ
 միշտ կը շրջագայի:

Այդ օրը կարծես այնպիսի վիճակա-
 հանութեան թիւ մ'է, որ երբեք չահելիք
 չունի:

Այդ օրը ՎԱՂՆ է:

Գայիլէոս հեռագիտակը հնարելով
 տեսնուած աւարկայք ո՛րքան մօտեցուց
 մարդոց աչաց, ՎԱՂՆ հնարողն այնքան հե-
 ոտցուց ամենայն ինչ մեր աչքերէն:

ՎԱՂԸ. անսպառելի օր մ'է, միշտ կը
 ծնի. առանց մեռնելու կ'ծնի:

Աշխարհի վրայ չկայ մարդ մը որ վաղ-
 ուան համար խոստումներ չընէ, պարտքեր
 չտանցնէ, և ՎԱՂԸ բառը չարտասանէ:

ՎԱՂԸ, միշտ հեռուն, ամենէն հե-
 ոուն գտնուող օրն է:

ՎԱՂԸ, մինչեւ իսկ օրացոյցին մէջ նը-
 անակուած չկայ:

Երիտասարդը իւր յոյսը ՎԱՂՈՒՄՆ վը-
 րայ կ'դնէ:

Օրիորդը իւր բաղձանաց լրումը ՎԱՂ-
 ՈՒՄՆ օրէն կողատէ կողատէ:

Աղքատը ՎԱՂԸ հարստանալ կերազէ:
 Տանախկինը այսօր անցաւ ՎԱՂԸ նա-
 յինք կ'դռնէ:

Էրիկ մարդիկ օրուան ծախքը ըրած
 ժամանակներն ՎԱՂՈՒՄՆԸ կ'մտածեն:

Նորոտէրը օրուան պշտանքներէն զըղ-
 ուած, ՎԱՂՈՒՄՆԸ տեսնել կ'փափաքի:

Նպարավաճառը այսօր կանխիկ, ՎԱ-
 ՂԸ ապառիկ կըսէ, այլ սակայն ո՛չ ՎԱ-
 ՂԸ կհաւանի և ո՛չ կանխիկը:

ՎԱՂԸ, երկու վանկով բառ մ'է, որ

բաւական կըլլայ կիները ընկցունելու :

ՎԱՂԸ կվճարեմ՝ միսիթարական խօսք մ'է պարտապահանջի մը համար :

ՎԱՂԸ կքնեմ. ամենամեծ գործունէութիւն մ'է, ոչինչ չընելու համար :

ՎԱՂԸ պատրաստ է կրօն գերձակը, և միշտ վաղուան համար պատրաստել կը խոստանայ :

ՎԱՂԸ գոյութիւն չունի. ՎԱՂԸ բազմոնք մ'է, պատիր յոյս մ'է և որուն իշահանութիւնը այսօր է :

Եւ միթէ՛ կոյր են մարդիկ, որ միշտ միտութեան մէջ խարխալեն «ՎԱՂԸ պիտի տեսնեմ» ըսելով :

ԱՆՔԻՏՈՍԻՆ ԱՂԶԻԿՏԵԱՐ

Ինկիւտար և Սամաթիա դայուզ խօսքերը ետ դարձած երբ անհամբեր կսպռնեն թօփ գափու, Էյիպ, Սալմաթօմբուք և Խապիւզ դայուզներուն գալտեան, և տհա պրան ուժգին հարուած մը հարուած մ'ալ :

Դուռը բացուելով՝ անիքտոսին քրօջները ու միսքքօջ տալու ըրաքը ալլա՛հ գօշլով ներս մտան :

Վաղբի նման կատղած էին և աչուքներն կը փայլէին :

Անիքտոս դիմաւորելով սկօտ կատակներ ընել,

— Նա՛ կառնես, ճէպս է, թէքկէյի պէքէ քի ալլաման չօրպաւընը եէէսին — քսու մին :

— Քա՛ իմանըմ. հիմա ետ քեզնէ պաւնիկ մը կուղեմ՝ կոր, օանքի ուշացաք տէֆեֆէտէ էլթաիմ :

— Ծօ՛ Անիքտոս քէլէփիը մը՛կտանք քի, Էյ խալրի սանկ ֆէսդ ծոէ տէ քէֆդնայէ :

— Ալլա՛ն :

— Իրա՛ն քա սօֆիկ :

— Ձեռ աւտար նէ, թօ՛ղ Թերեզան նախ ընէ :

— Ըսէ նայի՛նք քա Թերեզա :

— Ծօ՛ իշտէ աւտուն ապէ ելանք Թօփ-խաբու դայինք. Ալլա՛ն :

— Էյ նէ՛ տղնաւք պունտան :

— Էյ խուսուրնալ թող կայտէֆանքս :

— Ըսէ պէ՛ կայտէֆա, չիմոի չաթլա, յաճաղըմ՝ հա՛ :

— Ծօ՛ իշտէ Թօփ-խաբու դայինք, քա՛ աւտամ տմոն ումա՛ն :

— Թամամ, ոչտըրաւք. խան սարհօշ, խանճը սէրհօշ :

— Ծօ՛ անիկթա ապա, ճգէ թող քնանան տէ վաղը կհամնաք :

Այս իդական գինաֆները իւրաքանչիւրը տունը բռնին մէկ մէկ անիկներ փրօուելով սկսան խորհալ :

Աւաւօտ է Անիքտոս սովորականէն կանախեղելով՝ մեղմարտումնուն ձայն տուա :

Մեր գինաֆները կէս մը սթափած ելան և իրենց ճանապարհորդութեան համարը տունին :

— Ծօ՛ Անիքտոս, Թօփ-խաբու դայինք Էյ տղիկ տեսանք, Էյ չիտակք Ա՛ն, պախլաֆիչ ընէ ումա, մութլափա էրեմին պէյզ պէթ չիկայ դահէր. հալային սերլթութենէն է :

Էյ քիչ մընալ դա՛ խօսէ կայտէֆա :

— Անկէ ելանք էֆէնաիմ՝ սէնոն Սարմա-թօմբուք, Տ հատ ալ հոն տեսանք, մէկզմէկէ պատիւն տղ որնել տմա, մութլափա տունք ալ տանկուտիութիւնը իրենց հօրմէն մօրմէն մերաա էն կերէր զիսեւքի :

— Էյ յօքնեցայ քիչ մընալ դոն խօսէ Թերեզայ :

— Իշտէ անկէ ելանք Էյիպ պուտուրայէ տապան հոնպատեան դայինք :

Մէյմը Էյիպ աղջիկ տեսնելու ուզողը
տունները երթալու չէ եղեր, պախճանները,
գինետներ և եղեր, քա՛ն ան անմէն վարդի
ձառին քով տանաւորում հաս կայ:

Ետպանճի մարդ մը տեսնելուն պէս
տնանի խային խային մարդ ուն կնային կոր
քի՛, մեղա՛յ:

— Էյ տղնաւոր՝ ք ճուս, պի՛ր չէյէ
քարար վէրախնի՛ղ մի:

Ոնոս պաղապրմ:

— Մտի՛կ ըրէ, էչէն առաջ տիրա մը
մանար, պախճաններուն ձայր տունի մը
գուռը բաց էր, անկէ անցնելիքէն, ինչ
տեսնանք, աղջիկ մը թեքնէյին տակ կայ
ներ չաղը չաղը չամուշը կլուար, գուռ
նէն ներս մտանք, ջուր մը ուզեցինք, մին
չեւ ջուրը բերաւ, խմեցինք նէ՛ աղէկ մը
սիւզմիւշ ըրինք չորս կողմն տեսանք, աղ
ւոր, ընող ըլլող գրարար խօսող. ծունի
պէս ճերմակ աղջիկ մը:

Էյ:

— Էյ էյ, առ հաս թող մնա բռնիք,
մենք ճամբայնիս շտկեցինք Խառնիկ շիրտակ
Պատէմիկ:

Վայ, վայ, վայ, տանն պաղաւթ,
պէս տալը աէսէրէին տէ, փութիւն ապ-
րանիօգի պէս գուրս թափեր էին, էս ըսեմ
100, գուն ըսէ 50. փութիւն մէկզմէկէ
սրտաքնն, էյ նայեցանք քի ըլլալու պան
չէ, որը քրտա կրտէ, որը փրտա կրտէ, ու
ըն ուղ, վարպետութիւնով ինչու համար
պաշտօնիս խմանալ կուզէ:

Նունուֆարը անանց մէկին հետ խօսե-
ցաւ, խայրի թող ինքը պատմէ ինտոր եւ
դառ նէ:

Էյ պի՛ր սաքըզ տա սէն չիյնէ քա
Նունուֆար:

Նէ՛ Խախտըն պաքալըմ:

— Մեղայ հողի, նէ՛ Խախտըն
նայեցա քի մէկ աղւորիկ թօսթօխարալի

աղջիկ մը կար ամա աչքերը չամբախ կզար-
նէր կոր, էհ ինչ մեղքս պահեմ սիրաւ
սիրեց:

Ան ալ քի՛չ քի՛չ ինծի մօտենալով
հարցաւ:

— Տուտա ք՛նչ կրնաւեք կոր:

— Այեանա՛ք քըզըմ - ըսի:

— Գիրտու տուտաք - բաւ:

— Շահին կեօղ - ըսի:

— Թաթը տիւ - բաւ:

— Ռաբը պէյին - ըսի:

— Պիլախմ սէնի - բաւ:

— Կէօրտիւմ սէնի - ըսելուս պէս
ձեռքերնուս պանեց շխաակ տուն տարաւ.
բախի մէզէ մէյմը մէյմը տահա, չաք
չաղմաղ մըսն էյ արեւը մարը կմանէ
կոր, տահա Խախտնիս թող չտար:

Էյ խայրի ասանի իքրամճի, ասանի
չախա չէրաֆ ընող, ասանի իսկայի, աղ-
ջիկ չըլլար:

Մէյ մալ նայիս՝ առջեւնիս ինկաւ,
մեղ խոկելէն տարաւ խայրի գրաւ ու բ-
աւ:

— Սէվախմ սէնի:

— Ալալմ սէնի Տիւրբէկ - ըսի, այլ
չենք գիտեր թէ ծովը կփախէր չենէ
մենք. իշտէ ան հաղով ելանք եկանք:

Խայրի չենք գիտեր գուք ինչ թա-
ղուցիք. ամա, չէ՛, չէ՛, բլանէ ան ըլլայ,
ան աղջիկը ըլլայ, չէ նէ հիշ չըլլայ:

Լուսնկայի պէս երես, անուշիկ լեզու,
քէ մանէ քալը, սիւրմէ կեօղիւ, վարդի
թերթի պէս տուտախններ, սըրմա մաղեր,
պիւլպիւլի պէս լեզուանի, չէ՛ չէ՛ իլլէ ան
ըլլայ, անանի մարդասէր, անանի իքրամճ
հի հէմ հալը վախտը ալ տեղը, Խախ
փարսց մորա ալ չունենայ նէ, հող չէ
նեղութիւն չբաշեր, փարասը չըմենալ,
իր փօտը ջուրէն կհանէ:

Աման ըլլանէ ան ըլլայ չենէ հիշ չըլլայ:

— Դա՛ տուտու, նէ տէրսին սէն պա-
նա :
— Նէ տէ՛րիմ՝ օղբում, ոէն պիկրսին՝
— Է՛յ շիմոիճիկ վաքթ կէճ տէր,
չունտա պիր իքի իւք վար թաշըյաճաք,
էրթամ տէ իրիկուան մէկ օրթա սուփա
մը ընենք, մէկին մէկուն խարարը տանք
լինայ երթայ :
— Ագէկ կրլայ :
— Չէ՛, չէ ըլլանէ ան ըլլայ չնէ հիւ
չլլայ :
— Մեղայ հոգի, զահէր մութլախ
քու տեսածդ պիտի ըլլայ, մեր տեսած-
ները աղջիկ չե՛ն :
— Չէ՛, իլլէ ան ըլլայ :
— Իչտէ ան չպիտի ըլլայ :
— Պիտի ըլլայ :
— Է՛յ չենէ մեղ ի՞նչու յոգնեցուցիք,
թող գուք մինակ էրթայիք :
— Ըսի կենէ կսեմ, ան պիտի ըլլայ
անպիտի ըլլայ ան պիտի ըլլայ :
— Չպիտի ըլլայ, չպիտի ըլլայ չպիտի
ըլլայ :
— Է՛յ ճանրմ՝ պօշ տեղը կսիւ մրնէք,
տղաս ըտաւ քի իրիկուան օրթա սուփա մը
ընենք տէ խարար տանք :
— Իչտէ իրիկուան կիսօրիմը հիմա միւ-
ճատաեղէ մրնէք, աղջիկ տեսաղբ գուք
էք նէ օղբանն անտարտա պենիմ, մեղայ :
Աղջկանամը ընթերցող տէ օրթա սուփան
աղ տեսնենք :

ԲԱՌԱՐԱՆ ԴԻՈԳԻՆԵԱՆ

Դ. դա

Չօրրորդ դիր բաղաճայն

Դիւսիւր գէպի ուտը կտխած է աջ ձեւ-
քը հորիզոնական գրիւք երկնցուցած մար-
գու մը կընամանի :

Դաջաղ. — Յտ իսենտականութիւն եր-

թալու համար այս աշխարհէն մեկնող ան-
ձանց գահաւորակը .

Դալիւրի. — Ամէն Ա. Բ. Դ. գիտցողնե-
րուն ստանալ ուզածը .

Դահեակ, Ձմեղ այս աշխարհ բերե-
լու հրաւիրակը .

Դարան. — Նպարավաճառին տետրակը
— ուր անդամ մը իննողը այլ հս չողատիր .

Դանակ. — Առանց ակաւայի սղոց մը .

Դդալ. Բէքչէին ձագուկը .

Դիմակ. — Ի հնումն միայն բարեկեն-
դանի օրեր, իսկ այժմ ամէն վայրկեան,
չատերուն դորձածած մէկ բանը .

Դրամ. — Աշխարհք քաղցունող ման-
տըրաիկ անիւներ .

Դրախտ. — Յարմար ամուսնոց մը .

Դծողք. Յարմարագոյն ձմերանոց մը .

Դեղ. — Հիւանդութեան դէմ բացուած
պատերազմին մէջ գործածուած լատ օթը .

Դողգոջումն. — Երբ լծաւ մէ, հոյին
գէմ, երբ մարդ չմէ պարտապահանջին աղ-
դեցութենէն .

Դիւրալոյժ. — Մեր կոշիկները .

Դժուարագնաց կեղծ դրամ մը .

Դեղագործ. — Ջրալիւծառի նման տը-
հեռաւոր մը :
Դեռածին. — Եր կնոջ օր հարցունես =

Դեւ. — Իւրաքանչիւր անձ հոյեկիին
մէջ կրնայ տեսնել :
Դեղձանիկ. — Օրիորդ մը, իւր սիրա-
հարին համար :

Դերձակ. — Խուճաշները սպաննող ոճ-
րագործ մը .

Դատարի. — Դրամ պահած քաակիւ :

Դժգոհութիւն. — Այս աշխարհին մէջ
մեզնէ անմեկնելի բան մը :

Դատաստան. — Անխաւարտի է, զի
այս աշխարհին մէջ ալ կայ հանդերձեալին

մէջ ալ :
Իենդը. — Այսինքն Լուսինի խմբաղի-

րը — Տնօրէնը :

ԱՍՏՈՒԱԾ ՄԻ ԱՐԱՍՑԷ

Լրագրապետաց հետ գործ ունենալ:
Աշխատի «Կովկասեան ուղեւորութիւն»
ը կարգալ:
Տիկնճի շոգենաւով Պէոյիւք տերէ
երթալ:

Բերայի թաթը առ ֆրէնքներուն քը-
տոյը շնորհ կին մ'ունենալ:

Ամսուռան աթաղին աւուրց մէջ
ճառախօսութեանց սենիդիր ըլլալ:

Յօդուած գրելով՝ ընտանիք պահել:

Աղջկան մը փափաքները կատարել:

Ուրբաթ օրերը Ղալաթիայ եկեղեցւոյն
քովէն անցնիլ:

Հրէից հետ առ և տուր ընել:

Եէնի-Ճամիի ժամացոյցին ճշգրտութեան
համեմատ շարժիլ:


Թաղային դպրոցներու մէջ բոսին
բուն նշանակութեամբ փարձապետութիւն
ընել:

«Արեւելք» ի խմբադրաց բաղմունքեան
մէջ խմբագիր փնտռել:

Ժողովոյ մը մէջ «խօսք կողմ» բռն-
լու պատիւը ունենալ:

Ինքզինքնին Պիզմարք կարծող հո-
գաբարձութեան հետ վէճի բռնուիլ:

Բարկացում պարանջ մ'ունենալ:



ԶՈՒԱՐՃԱԼԻՔ

Թիշկ մը իւր մէկ հիւանդին այցե-
րելով՝ դռնէն դուրս ելած պահուն, առ-
ջը սպասուհին նորա ետեւէն վազելով կը-
ռէ:

— Է՛հ, պարոն բժիշկ, ի՞նչ փնտալի
մէջ կ'գտնէք որդեօք տիրուհիս:

— Յոյս չկայ:

— Ո՛հ Տօքթօր, կաղաչեմ որ աշ-
խատիք նորա կեանքը գեթ մինչեւ յուն-
վար 3 երկնցունել:

— Ինչո՞ւ:

— Որպէս զի կարենամ կաղանդչեքս
առնել:

* *

Արհեստաւոր մը իւր ձեռնարկը յա-
ռաջ տանելու համար պէտք եղած գրա-
մագլխին վրայ խորհած պտեն, լրագրի մը
ծանուցմանց մէջ կը կարդայ թէ «պարոն
մը կուզէ 500,000 ֆրանք մէկուն քով դը-
նել» խկոյն դրամատէրին տունը փազելով
կըսէ:

— Պատրաստ եմ ընդունիլ Զեր 500,
000 ֆրանքը պէտք եղած սրայմաններով:

— Անտարակոյս, գործը կրնամք կար-
գադրել— կը պատասխանէ գրամատէրը:

— Ուրեմն յայտնեցէք Զեր սրայմանը:

— Ամուրի՞ էք:

— Այո՛:

— Ուրեմն կրնաք ընդունել մեր մի-
ակ սրայմանը:

— Եւ ի՞նչպէս:

— 500,000 ֆրանքին հետ առնելով
նաեւ իմ՝ առ աղջիկս— ըսելով՝ տնէն փաք-
րիկ ճիւղ մը յցուց որ սենեկին մէկ ան-
կիւնը նստած կաշխատէր:

— Անիծեալ ըլլան լրագրաց շորտորդ
երեսի ծանուցումները— ըսելով կը վախ-
ճի մեր արհեստաւորը:

* *

Հարուստ բայց ագահ ծերունի մը
իւր եղբորորդւոյն հառաչելով կըսէր:

— Վա՛յ, վա՛յ, վա՛յ, մեռնելը հազ

չէ, բայց յաշարհաւորութեան ծախար քնելը կ'մտածեմ:

— Թո՛ղ այդ պատճառ մը չըլլայ քու սպրեւրդ, ես կ'մտայեմ — պատասխանեց հօրեղբայրդին:

Լրագրագետ մը, իր բարեկամներէն միոյն պատահելով կ'հարցունէ:

— Կարծացի՞ք լրագրոյս վերջին թիւը:

— Ի՞նչպէս չէ, սնոր բաժանորդ եմ — պատասխանեց բարեկամը:

— Ի՞նչպէս, դո՛ւք էք այն — կըսէ պարնայեմք լրագրագետը, վասն զի մէկ բաժանորդ միայն սենիւ խեղճը:

Գիտուն մը խելքը մկտքը բնթերցանութեան ու գրելու տուած քլաւով, բարձրովին լքած էր իւր կինն որ տատառտ մը տեսնելով իւր ամուսինին գարձեալ գրքով դրաղեալ, համբերութիւնը կ'հասնի եւ նմա մերձենալով:

— Ո՛հ, սիրելի ամուսինս, կըսէ յասահատ ձայնով մի, իցի՛ն թէ ես զիրք ըլլայի:

— Ո՞ւր էր, կ'պատասխանէ գիտունն պաղարինութեամբ մի, երանի թէ օրացոյց ըլլայիր, կրնայինք այն սառն տմեն տարի փոխել:

Գողին մէկը պարոնի մը գրպանէն թղթապանակը քաշած միջոցին բռնուելով քննութեան ենթարկուեցաւ:

— Ինչո՞ւ կ'քաշէիք թղթապանակը պարոնին գրպանէն — հարցուցին իրեն:

— Այո՛ — պատասխանեց — ես թղթապանակը պարոնին գրպանէն կ'քաշէի անկէ

վերցունելու համար սակայն կրկին իր տեղը դնելու մտօք. իմ առաջին չարժումներս յաճախ գէշ բաց երկրորդ չարժումներս միշտ բարի եղած են. զի՞նչ ձերբարկալը պարտաւոր էին իմ երկրորդ չարժմանս ուղտել:

Գինեպանին մէկը Կ զինով կտուք մը նստեցուց, կառապանին բառ որ ձախկեղ մի անկիւնը նստող անձը այն ինչ փողոցը անոր քովինը այս ինչ փողոցը, նորա գիւմացինը այն ինչ թիւ տունը եւ անոր քովինն ալ այս ինչ թաղը տանի, ես դասնալուն վարձքը առլ էտտանալով:

Կառապանը քառօրէ մը ետքը դասնալով՝ ըսաւ գինեպանին:

— Խնդրեմ, այս մարդիկը եկուր քու ձեռքովի մէկ մ'ալ կարգադրէ. վասն զի անպիտանները ճամբան կասքին մէջ իրար խառնուելով, անկարելի ըրին ինձ իւրաքանչիւրը ձեր յանձնարարած տեղերը տանիլ:

— Իմ եղբայրս շատ խելացի է, մինչեւ եղունքներուն ծայրը խելք սենիւ-ըսաւ մէկը իւր բարեկամին:

— Այդպէս է նէ պատուեր տուր իրեն որ բնաւ եղունկները չլարէ պատառ խանկեց ընկերը:

Թատրոնի մը դռան առջեւ

— Օրի՛նդ . . . :

— Հանդարտ թողէ՛ք զիս, պարոն, ձեզ չեմ՝ ճանչնար:

— Ներեցէ՛ք, օրիւրդ օրքան պաշտելի աչքեր ունիք:

— Կը սխալի՛ք պարոն, կ'պատասխա-

նէ անագորանօք օրիորդն. իմ՝ աչքերս
այս գիշեր պաշտելի չեն յեղհ հաւար . . . :
Վաճառած եմ զանանք . . . :

Գողիայ թագաւորը Լաւդովիկոս ժգ.
տառնաւոր մը գրած ըլլալով. Պաւարս բա-
նաստեղծին կցուցնէ :

— Ինչպէս գտաք դքսո՞ւս :

— Տէր արքայ. աշխարհի վրայ բան
չկայ որ անկարելի ըլլայ ձեր Վեհափառ ու-
թեան. գէշ ուղեր էք չինել և յաջողեր
էք :

Շքեղ պարահանդէսի մը մէջ ագնուա-
կան երիտասարդ մը նշանաւոր երգչուհւոյ
մը գեղեցկութենէն հրապուրեալ՝ նմա կը-
մերձենայ հետեւեալ հարցումը ընելու
համար :

— Օրիորդ. գիտէք թէ հաճոյքը
սիրոյ զաւակն է :

— Այո. իրաւունք ունիք. պարտն.
կը պատասխանէ մեր երգչուհին. այնպիսի
զաւակ մ'է որ իւր հայրը կսպաննէ :

Սեղանի մը վրայ

Մայրը իւր զաւակը կըտամբած միջո-
ցին :

— Ծո՛ Պօղոսիկ. անկէ ելի՛ր. տակա-
ւին հօրդ քով նստիլը քեզի չվայելի. եր-
բոր պէխերդ ու մօրուքներդ գայ նէ. այն
տակն ուզած տեղդ նստէ :

— Այն պահուն տան մէջ՝ գանաւող
պեխաւոր փխիկը կոկոխ մըտել Պօղոսի-
կին շուրջն : Տղեկն բարկացեալ :

— Կորի՛ր. ալ ես քեզ չեմ ուղեր.
դուն պէխեր ունիս. հօրս քով նստէ :

— Կեող մը ամենէն տեղի գոհունա-
կութիւն պատճառող բանը ո՞րն է :

— Իւր գեղեցկութիւնը . . . :

— Ա՛յ, ուրիշի մը ազեղութիւնը :

Տան մը մէջ.

— Փա կնիկ, քնացած ժամանակո ին-
չու զիս կարթնցնես :

— Տնաչէն մարդ, որովհետեւ չքնա-
ցած բամանակդ զքեզ արթնցնել անկա-
րելի բան է :

Տիկին Մ. իւր մէկ բարեկամին հետ
խօսակցած պահուն, տան սրտատուրը սեն-
եակէն ներս մտնելով.

— Տիկին, միւսիւ Տօքթօրը եկեր է :

— Միւսիւ Տօքթօրը . . . Էօֆ, զը-
նայ բռէ որ տեսակցելու ժամանակ չունի,
հիւանդ է :

Երկու խօսեցեալներու միջև

— Ա՛հ, տնուշիկս, կը սիրեմ զքեզ.
ինձի համար դժու երկրորդ զարտն մ'եմ :

— Հոգի՛ս, դուն ալ ամեն տունն այդ
խօսքը կը կրկնես :

— Ի՞նչ . . . կուգես որ չքանձ, պաշ-
տելի արարածս :

— Էօֆ . . . զիս այնքան զարտն
կը կոչես որ օր մ'ալ դուն «իմ աշուն»
պիտի ըլլաս :

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

Խօսքը օրտին բանալին է :

Կանանց սարը իրենց բիզուն է :

Պարը՝ պատանեաց համար հաճոյք :

մը, երկտասարդաց համար պատրուակ մը
եւ ծերոց համար հոգնութիւն մ'է:

— Փիլիսոփայ մը իւր որդւոյն ամուս-
նութեան համար բարեկերթ աղջիկ մը կը
վնասուէր—տակաւին շատ պզտիկ է, կը-
սէին իրեն իւր սղզականք սպասեցէք սր
խելացի ըլլայ:

— Ի՞նչ կրէք տէր Աստուած. պա-
տասխանեց փիլիսոփայն. եթէ իմ սրբիտ
խելացի ըլլար. ամուսնութիւն բառն մինչեւ
իսկ մտքէն չէր անցնէր:

Կինը աչաց դրախտը սրտին դժոխքը
և քոսկին ցեցն է:

Պաշտո մը առանց կնոջ կրէր ծիրան-
կիսկոս Ա.

Կը նմանի առանց վարդի դայնան:

Կինը տիեզերաց հրաշակերտն է:

Առանց աղու ամուսնութիւնը կը նմա-
նի առանց արեգական աշխարհի:

Սէրը եղիտասարդաց թագաւորը իսկ
ծերոց բռնաւորն է:

Սէրը աւելի զօրաւոր է քան պատե-
րողն:

Երջանկութեան երազը իրական երազ
մ'է:

Օրիորդ մը օր մը կը հարցնէր Մօն.
Թէսքիէօյի թէ ի՞նչ է երջանկութիւնը:

— Օրիորդ. պատասխանեց նմունչա-
նաւոր գրագէտն. առատութիւն մ'է թա-
գուհիներուն համար իսկ երաշտութիւն մը
աղջկանց համար:

Կանանց կեանքը երկար հիւանդու-
թիւն մ'է:

Դէմքը հոգւոյ հոյեղին է:

Կեանքը ծաղիկ մ'է և սէրը՝ մեղրը:

Սիրելը սրտին պէտքն է, սիրահարու-
թիւն ընելը մտաց զրազումն է:

ԻՌԵՐԱՐԻՆ ԶԱՆԵԼԱԿԻ

... Խմբագիր

Ս ԵՐ. ԹԻՐ. ԼԱՊՈՒՐԻ ՄԷՋ ՀՐԱՄԱՐԱԿ.
ԵՎ ՀԱՆԵԼՈՒԿԻՆ ԸՆԺՈՒՄԸ. ԵԹԷ չեմ սխա-
լիր այս է:

Մանկութեանս ատեն պէր կը խողովի.
Օր մը ինձ բոսա փաթապետս բարի.
Ինչ օգուտ քեզ պարս աշխատէ դու.
Որպէս զի կուտիս ամենէն պարս:

Ս ԹՈՒՅՆ ՀԱՆԵԼՈՒԿԸ ԸՆԺԱԾ ԵՆ Մ.
Յ. Մ. և Ս. Չախուշեան էֆէնախի, և
փափաքած են խոստացեալ նուէրը Գուժ
գարուի Լուսաւորչեան վարժարանի տալ.
սակայն մենք յարմար դատեցինք յիշեալ
երթու էֆէնախներուն կողմանէ տարեկան
Ընտանիք նուիրել Լուսաւորչեան վարժա-
րանի՝ յօդուտ աղղ. մանկադն:

Սոյն հանելուկը ընծած են նաեւ Դ.
Մոզես և Յ. Էքշեան:

ՊԱՐԳԵՐԱՐՈՐ ԶԱՆԵԼՈՒԿ

Թեւաւորաց կարգէն եմ

Դիշակերաց դասէն եմ

Կրկնուած մակրայ մը դաիր

Եւ իմ անունս ի՞նչ է դիտցիր

Սոյն հանելուկը ընծայը 10 թիւ Լապ.
տէր պիտի ուսմայ:

ՏԵՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ
ԱՐԱՍ ԱՇՃԵԱՆ

ՏՊԱԳՐԵԱԼ ՀՐԱՄԱՆԱԻ ՄԷԱՐԻՖԻ